## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

# ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՑ ՍՈՂՈՄՈՆԻ

### ՆԵՐՍԷՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԱՐՍՈՆԻ

NERSES VON LAMPRON

Erzbischof von Tarsus

# ERKLÄRUNG DER SPRÜCHWÖRTER SALOMO'S

Herausgegeben und Übersetzt

von

PRINZ MAX, HERZOG ZU SACHSEN

D. Theol. et Dr. Utriusque Juris

Erster Teil

Mit Drei Tafeln

Leipzig - Otto Harrassowitz - 1919

ՅՈՒՇԱՐԱՐ. — Պաշտօնաթերթ Հայկական բարեգործական Ընդհանուր Միութեան Ամերիկայի շրջանակին. — Կը հրատարակուի ամէն երկու շաբաթն անգամ մը. — Տպարան «Ազգ»ի- Պոսթոն։

ՀԱՅ ՊԱՏԱՆԻ. — Պատկերազարդ Շաբաթաթերթ. Կ. Պոլիս. Տպ. Օ. Արզուման, թ. 1-5։

Dr. MAHOKIAN (P.-M.). — DEMOS ou Les vraies bases de la Société des Nations. - էջ 141. Ed Bossard, Paris.

ՕՆՆԻԿ ՄԱՀՏԵՍԵԱՆ. — Արիւնի ճամբէն դէպի Վերածնունդ. — էջ 12. — Գահիրէ 1919։

ՄԿՐՏԻՉ ԿԱՊՐԱՇ. — Երկու խօսք. Հրատարակութիւն «Երևան»ի. — էջ 8. — Կ. Պօլիս 1920։

Եա Պահա իւլ-Ապհա (Ո՞վ փառաց փառքը). — Կը պարունակէ Պահայիզմի պատմութիւնը և սկզբունքները. - էջ 16. — Գահիրէ Տպ. «Ոսկետառ», 1920։

ԱՄՓՈՓՈՒՄ. — Հայ Ազգ. Համագումարի Բ. Նստաշրջանին աշխատութեանց և որոշմանց (1920 Մայիս 5 - Յուլիս 13). էջ 7։

INFORMATION BUREAU of the American Committee for Armenian Independence. — New York։

*Լոյս տեսաւ՝ մեր ծոցի ՕՐԱՑՈՅՑին 165երորդ հատորիկը* (1921) *և կ'արժէ (ճնպրհածախսով) հատը* 1 *ֆրանք։*

digitised by A.R.A.R.@

## ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ – ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ՊԱՏՄԱԿԱՆ –
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ – ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

**79 ՐՈՐԴ ՏԱՐԻ**

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԸ *Հայ ազգի մամուլին երիցագոյն ներկայացուցիչն՝ 1921ին կը սկսի նոր շրջան մը։*

ԲԱԶՄԱՎԷՊի *արդի խմբագրութիւնը՝ յարգելով իւր նախորդաց գործունէութեան ծրագիրը՝ պիտի ճգնի Գրական, Գեղարուեստական, Բարոյական և Դպրոցական մասնաճիւղերու աւելի ոյժ տալ. հետևաբար պիտի ջանայ, Վարդապետականը՝ Գործնականին, Բանասիրականը՝ Գիտականին, Գեղարուեստականը՝ Մանկավարժականին և Օգտակարը՝ Զուարճալիին հետ հաշտեցնել։*

ԲԱԶՄԱՎԷՊը *Հայ Ազգիս բարոյական, իմացական, կենցաղական զարգացմանը նպաստելու դիտաւորութեամբ, պիտի բովանդակէ Համազգային Ուսմանց և Գիտութեանց և Գեղեցիկ Դպրութեանց այժմէութիւններ՝ ինքնագիր կամ թարգմանածոյ։*

ԲԱԶՄԱՎԷՊը *որպէս զի ամբողջ Հայ մտքին ցարդ ի լոյս ընծայած կարևոր արտադրութիւններուն և հրատարակութիւններուն տեղեակ ընէ իր ընթերցողները, դարձեալ պիտի աշխատի* ԳՐԱԽՕՍԱԿԱՆ *բաժնին մէջ՝ խմբագրութեանս նուիրուած ամէն գրքերու և* ՀԱՅԵՐԷՆ *կամ* ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ՀԱՅ *հեղինակութիւններու կամ Գեղարուեստական արտադրութիւններու վրայ, հակիրճ տեսութիւններ հրատարակել։*

ԲԱԶՄԱՎԷՊը 1921*ի շրջանին մէջ՝ պիտի ջանայ իր անուան հաւատարիմ մնալով՝ Բազում վէպեր՝ այսինքն գիտութիւններ մատուցանել՝ գրասէր և ընթերցասէր Հայորդւոց և անգամ մը ևս գնահատուիլ իբրև* ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆ *հայկական մտքի։*

ԲԱԶՄԱՎԷՊը *ամէն ամսուան սկիզբը լոյս պիտի տեսնէ և անմիջապէս պիտի ուղարկուի բաժանորդներու և մեզ հետ պարբերական հրատարակութիւններ փոխանակողներու։*

ԲԱԶՄԱՎԷՊի *խմբագրութիւնս և Տպարանիս Վարչութիւնը ընդհանուր սղութեան անտեղիտալի պահանջին հանդէպ, և բազմաթիւ արգելքներու և ծախսերու հրամայական հարկին տակ կը ստիպուի չափաւոր յաւելումով մը Բաժանորդներ արձանագրել յաջորդ տարւոյն համար։*

ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

*Փրանք ոսկի* **25**, – *տոլար* **5**,

digitised by A.R.A.R.@